2021-2022 ուսումնական տարում Տավուշի մարզի **2**-րդ դասարանում սովորողների ուսումնառության արդյունքների ոչ միավորային գնահատման՝ բնութագրերի ձևանմուշների վերաբերյալ

Նախաբան

Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանվել է, որ 1–4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի 1-ին կիսամյակում իրականացվելու է ոչ միավորային գնահատում, իսկ սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման նոր կարգի համաձայն՝ յուրաքանչյուր սովորողի համար որպես կիսամյակի ամփոփում կազմվելու է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Տավուշի մարզի փորձարկող 2-րդ դասարանի ուսպլանով նախատեսված բոլոր առարկաների վերջնարդյունքների հիման վրա կազմվել են բնութագրերի հնգաստիճան սանդղակներ՝ որպես օգնություն ուսուցչին:

Յուրաքանչյուր աղյուսակի առաջին սյունակում տրված են տվյալ առարկայի ուսումնական ծրագրով սահմանված թեմաները (ԵՇԱ, Շախմատ, Մաթեմատիկա և այլն) կամ առարկայական չափորոշչով նախատեսված հիմնական հասկացություններն ու ենթահասկացությունները (օր.՝ Մայրենի), իսկ աղյուսակի առաջին տողում ներկայացված են Ա, Բ, Գ, Դ, Ե սյունակները՝ ցույց տալով առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների կատարման աստիճանը 1-ին կիսամյակի համար՝ նվազման կարգով:

Ամեն առարկայի ուսուցիչ կարող է կազմել յուրաքանչյուր սովորողի բնութագիրը՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքները.

- Պետք է շարժվել վերևից ներքև և հորիզոնական՝ գնալով ձախից աջ (Ա-Ե):
- Կարելի է ընտրել որևէ սյունակի նկարագրությունը ամբողջությամբ կամ համադրել հատվածներ տարբեր ձևակերպումներից, քանի որ նույն վերջնարդյունքի կատարման մակարդակների բաժանումը պայմանական է:
- Պետք է խուսափել մակարդակների բաժանել երեխաներին, քանի որ միշ հավանական է, որ որևէ սովորող բոլոր վերջնարդյունքների մասով կապահովի նույն մակարդակը:
- Չի կարելի սյունակները համեմատել կամ նույնացնել միավորների (5-միավորային համակարգի կամ 10-միավորային համակարգի աստիճանների հետ):
- Բոլոր բնութագրերը կազմվել են դրական շեշտադրմամբ. պետք է բացառել «Չի կարողանում», «Չգիտի», «Դժվարանում է» արտահայտությունները:
- Ուսուցիչը կարող է ըստ անհրաժեշտության խմբագրել կամ լրամշակել ձևակերպումները՝ առավել հարմարեցնելով դրանք տվյալ սովորողի ցուցաբերած արդյունքին:
- Բնութագիրը պետք է կցել սովորողի անձնական գործին:

Ցուցումներ բնութագրերի կազմման վերաբերյալ

Ներկայացված աղյուսակների Ա սյունակում ներկայացված են առարկայի առաջին կիսամյակին ուսուցնավող թեմաների վերջնարդյունքները՝ ձևակերպված բնութագրի ձևով: Սյունակը ներկայացնում է վերջնարդյունքների ապահովման առավելագույն աստիճանը: Հաջորդ սյունակները ներկայացնում են յուրաքանչյուր վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները նվազման կարգով: Վերջին՝ Ե սյունակում ներկայացված է վերջնարդյունքի ապահովման նվազագույն աստիճանը:

Ուսուցիչը կարող է յուրաքանչյուր սյունակի բնութագրերին ծանոթանալով՝ ընտրել յուրաքանչյուր երեխայի համար այն ձևակերպումները, որոնք առավելապես համապատասխանում են նրա ուսումնառության արդյունքներին կիսամյակի ավարտին: Այս աշխատանքը կատարելիս ուսուցիչը պետք է հիմնվի ողջ կիսամյակի ընթացքում կիրառած ձևավորող գնահատման արդյունքների (ստուգաթերթերի, համառող գրառումների, ռուբրիկների, դիտարկումների, հայտորոշիչ առաջադրանքների և այլ գործիքների պարբերական կիրառման վերլուծությունների վրա):

Բնութագրերը կարող են կազմվել տարբեր սյունակների բնութագրումներից ընտրված նկարագրություններից՝ ամբողջացնելով սովորողի ամփոփ բնութագիրը տվյալ առարկայից: Նույն տողից միայն մեկ բնութագրիչ կարող է ներառվել կոնկրետ սովորողի բնութագրի մեջ, քանի որ յուրաքանչյուր տողում նկարագրված են նույն վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները: Չի բացառվում, որ սյունակներից մեկի բնութագրումները լիովին համընկնեն կոնկրետ սովորողի առաջադիմության արդյունքներին, սակայն առավել հաճախ դա կլինի տարբեր սյունակներից առանձնացված բնութագրիչներից կազմված խճանկար:

«Մայրենի» առարկայի կիսամյակային ամփոփիչ բնութագրի ձևանմուշ

Կազմեց Աստղիկ Բալայանը

Հիմնական հասկացություն	Ենթահասկացություն	Ա	Բ	Գ	Դ	Ե
ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ	Վերաբերմունք և վարքագիծ	Ներդաշնակ հարաբերություններ ունի ընտանիքի անդամների, ընկերների, շրջապատի մարդկանց հետ: Հոգատար է իր և շրջապատի մարդկանց	Արդյունավետ հաղորդակցվում է մեծերի և հասակակիցների հետ: Հոգ է տանում իր առողջության մասին՝ պահպանելով ֆիզիկական ակտիվություն և առողջ սննդակարգ:	Հաղորդակցվում է մեծահասակների հետ, ունի ընկերներ դասարանում: Հետևում է անձնական հիգիենային, մաքուր է պահում սեփական մարմինն ու իր անձնական	Հաղորդակցվում է ուսուցչի և 1 – 2 դասընկերների հետ: Խնամքով է վերաբերվում անձնական օգտագործման իրերին, գրքերին, գրենական պիտույքներին:	Անվստահ է սեփական ուժերի նկատմամբ, կաշկանդված է փոխհարաբերություն ներում: Հետևողական չէ իր և շրջապատի մարդկանց ֆիզիկական և հոգեկան

		ֆիզիկական և հոգեկան առողջության նկատմամբ: Հարգանքով է վերաբերվում մայրենի լեզվին, դրսևորում է այն ճիշտ և տեղին կիրառելու պատրաստակամություն:	Պահպանում է խոսքի մաքրությունը՝ խուսափելով ոչ գրական ու ժարգոնային բառերից:	տարածքները (սենյակ, սեղան և այլն): Սովորելու նկատմամբ դրսևորում է դրական վերաբերմունք և հետևողականություն:		առողջության նկատմամբ:
ՀԱՂՈՐԴԱԿ-ՑՈՒՄ	Բանավոր հաղորդակցում	Լիարժեք հասկանում է լսածը, տալիս է համապատասխան արձագանք, ձևակերպում է հարցեր հիմնական գաղափարի վերաբերյալ: Նկարագրում է մարդկանց, վայրեր, իրադարձություններ, առարկաներ, երևույթներ՝ արտահայտելով իր զգացումները:	Հասկանում է լսածը և տալիս է համապատասխան արձագանք, պատասխանում է տրված հարցերին: Պատմում է ապրածի, դիտածի, ընթերցածի մասին՝ արտահայտելով սեփական զգացումները:	Հասկանում է լսածը և արտահայտում մտքեր լսածի բովանդակության վերաբերյալ: Պարզ ու հասկանալի պատմում է լսածը, ապրածը, տեսածը:	Փորձում է հասկանալ լսածը և ներգրավվել քննարկման մեջ: Պարզ բառապաշարով, բայց հասկանալի պատմում է իր գործողությունների մասին:	Լավ չի հասկանում լսածը, տալիս է ոչ ադեկվատ արձագանք: Կցկտուր պատմում է դրվագներ իր օրվա և զբաղմունքների մասին:
	Գրավոր հաղորդակցում	Վայելչագրության կանոնների պահպանմամբ իրականացնում է	Վայելչագրության կանոնների պահպանմամբ արտագրում է 6 – 7	Արտագրում է 4 – 5 նախադասությունից կազմված ոչ մեծ տեքստեր՝	Արտագրում է 2 – 3 նախադասությունից	Արտագրում է բառեր, արտահայտություններ՝ երբեմն մոռանալով որոշ տառերի

		ստեղծագործական արտագրություն: 3 – 4 նախադասությամբ գրավոր արտահայտում է իր հույզերը զգացածի, տեսածի, լսածի, կարդացածի մասին:	նախադասությունից կազմված տեքստեր՝ կատարելով տրված առաջադրանքները: Գրավոր պատասխանում է զգացածի, տեսածի վերաբերյալ հարցերին:	կատարելով տրված առաջադրանքների մեծ մասը: Ավարտում է թերի նախադասություններ ը՝ արտահայտելով իր մտքերը քննարկվող հարցի վերաբերյալ:	կազմված ոչ մեծ տեքստեր:	ձեռագիր տարբերակները:
	Ոչ խոսքային հաղորդակցում	Իր հույզերը, տեսածի, լսածի, ընթերցածի վերաբերյալ մտքերն արտահայտում է ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով, ներկայացնում է մնջախաղով:	Իր հույզերը, լսածի, տեսածի մասին մտքերն արտահայտում է ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով: Տարբեր ձևերով պատկերում է զգացածը, լսածը, տեսածը, ընթերցածը:	Իր հույզերն ու մտքերը արտահայտում է ժեստերի, դիմախաղի, մարմնի լեզվի միջոցով: Պատկերում է զգացածը, լսածը:	Իր հույզերն արտահայտում է ժեստերի, դիմախաղի միջոցով: Պարզ նշաններով պատկերում է զգացածը:	Դժվարանում է իր հույզերն արտահայտել համապատասխան ձևերով:
ԸՆԹԵՐՑԱ-ՆՈՒԹՅՈՒՆ	Տեքստի ընկալում	Հասկանալով և արտահայտիչ ընթերցում է տեքստեր, ներկայացնում է կարդացածի բովանդակությունը, ձևակերպում է հարցեր տեքստի հիմնական	Հասկանալով և վարժ ընթերցում է տեքստը, ներկայացնում է կարդացածի բովանդակությունը՝ պատասխանելով հարցերին: Կարդում է ոչ գրական պարզ տեքստեր, պատասխանում է	Ճիշտ և սահուն կարդում է տեքստը, պատասխանում է կարդացածի բովանդակության վերաբերյալ հարցերին:	Ճիշտ կարդում է տեքստի որոշակի հատված, պատասխանում է կարդացածի վերաբերյալ պարզ հարցերի:	Կարդում է դժվարությամբ՝ բառերով կամ արտահայտություններ ով, թույլ է տալիս անհարկի կանգառներ:

		գաղափարի վերաբերյալ: Կարդում է ոչ գրական պարզ տեքստեր, առանձնացնում է կարևոր մտքերը:	բովանդակության վերաբերյալ հարցերին:			
ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն	Խոսելիս ճիշտ է արտասանում բառերը, պահպանում է հայերենի ուղղախոսական պարզ կանոնները: Գիտի, որ բառը կիրառվում է նաև փոխաբերական իմաստով, խոսքում երբեմն կիրառում է փոխաբերական իմաստով բառեր: Հարցերի միջոցով ընդարձակում է տրված նախադասությունը:	Խոսելիս ճիշտ է արտասանում բառերը, հիմնականում պահպանում է հայերենի ուղղախոսական կանոնները: Տարբերում է բառերի իմաստային խմբերը, խոսքում կիրառում է հոմանիշ և հականիշ բառեր:	Բացատրում է ուսումնասիրած տեքստերի նորածանոթ բառերը համատեքստում:		Գիտի հայերենի հնչյուններն ու տառերը, ունի աղքատ բառապաշար, գրավոր խոսքում թույլ է տալիս մտքի սխալներ:
ՍՏԵՂԾԱՐԱ-ՐՈՒԹՅՈՒՆ	Կապակցված խոսք: Տեքստ	Բանավոր վերարտադրում է տեքստն այս կամ այն հերոսի անունից:	Գիտի տեքստի կառուցվածքը, բանավոր խոսքում պահպանում է տեքստի սկիզբը, ընթացքը և ավարտը:	Տրված նախաբանով 1 – 2 նախադասությամբ բանավոր շարունակում է տեքստը:	Ճիշտ հաջորդականությամբ բանավոր դասավորում է նախադասությունները՝ ամբողջացնելով տեքստը:	Դժվարությամբ բանավոր վերականգնում է տեքստը՝ տրված նախադասությունները դասավորելով:
	Հետազոտում. նախագիծ	Ձևակերպում է հարցեր և դրանց	Տրված հարցերի միջոցով վարում է	Խմբի ներսում մասնակցում է տրված	Խմբի կազմում իրականացնում է	Խմբի կազմում իրականացնում է

		միջոցով վարում է հարցազրույց դասընկերների, ուսուցիչների և ծնողների հետ: Առաջարկված ցանկից ընտրում է գիրք՝ իրեն հուզող հարցի պատասխանը գտնելու համար:	երկխոսություն դասընկերների, ուսուցիչների, ծնողների հետ և կատարում նշումներ:	աղբյուրներից հարցերի պատասխանները գտնելու գործընթացին:	դերով պայմանավորված որոշ պարզ գործողություններ:	որոշ մեխանիկական աշխատանքներ: